Ռամկավար Մամուլ
Փետրուար 8, 2011

# Կայ Արդեօ՞ք «Տարածքային Ամբողջականութեան Պահպանման» Սկզբունք Միջազգային Իրաւունքի Մէջ Կամ, Ինչպէս Միշտ՝ Ի՞նչ Անել

ԱՐԱ ՊԱՊԵԱՆ

Միանգամից ասենք, որ *«տարածքային ամբողջականութեան պահպանման»* սկզբունք միջազգային իրաւունքում չկայ: Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան (ՄԱԿ) Կանոնակարգի երկրորդ յօդուածի 4-րդ կէտը հռչակում է միմիայն հետեւեալը. *«[ՄԱԿ-ի] բոլոր անդամներն իրենց միջազգային յարաբերութիւններում պէտք է ձեռնպահ մնան որեւէ երկրի տարածքային ամբողջականութեան կամ քաղաքական անկախութեան դէմ ուղղուած ոյժի կիրառումից կամ սպառնալիքից, կամ այլ քայլերից, որոնք անհամատեղելի են Միաւորուած Ազգերի նպատակների հետ»: (All Members shall refrain in their international relations from the threat or use of force against the territorial integrity or political independence of any state, or in any other manner inconsistent with the Purposes of the United Nations.)* Այս հիմնադրոյթը ոչ մի ընդհանուր բան չունի *«տարածքային ամբողջականութեան»* պահպանման, այսինքն պետութեան տարածքի անձեռնամխելիութեան հետ: Ըստ ԱՄՆ արտաքին յարաբերութիւնների օրէնքի հեղինակաւոր մեկնաբանութեան, այն պարզապէս դրոյթ է ներխուժման դէմ՝ «ուժի գործադրման արգելք» *(prohibition of use of force)*,[1] -սոսկ կոչ է անում ձեռնպահ մնալ *«մի պետութեան կողմից ոյժի գործադրման միջոցով մէկ այլ պետութիւն գրաւելուց կամ նրա կառավարութիւնը տապալելուց»: (the use of force by one state to conquer another state or overthrow its government.)*[2] *«Որեւէ երկրի տարածքային ամբողջականութեան կամ քաղաքական անկախութեան դէմ» ("Against the territorial integrity or political independence*

---

[1] Restatement of the Law (3rd). The Foreign Relations Law of the United States, The American Law Institute, Washington, 1987; v. 2, § 905 (7), p. 389.
[2] *Ibid,* p. 383.

*of any state")* բառակապակցությունը ՄԱԿ-ի Կանոնադրության մէջ է ներառուել որոշ փոքր երկրների խնդրանքով, որպէս որոշակի երաշխիք, որ *«ուժ չի կարող կիրառուել աւելի ուժեղ երկրների կողմից աւելի թոյլ երկրների «տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության» դէմ (force could not be used by the more powerful states in violation of the "territorial integrity or political independence" of weaker states.)* [3] Ակնյայտ է, որ յիշեալ դրոյթը հակասության մէջ չէ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հետ եւ բնաւ կապ չունի մտացածին եւ միջազգային իրաւունքի մէջ գոյություն չունեցող, սակայն քաղաքական նպատակներով շահարկվող *«տարածքային ամբողջականության պահպանման»* այսպէս կոչուած սկզբունքի հետ: [4]

Այստեղ կարող է մի օրինաւոր հարց առաջանալ՝ ի՞նչ անել: Ի՞նչ անել, երբ միջազգային իրաւունքի որեւէ հարցի կամ այդ հարցի մեկնության շուրջ տարաձայնություններ են առաջանում: Պատասխանը պարզ է ու յստակ՝ պէտք է դիմել այն մարմնին, որն ունի համապատասխան լիազօրություններ եւ իմացություն տուեալ հարցը մեկնաբանելու եւ, առաւել եւս, դրա վերաբերեալ վճիռ կայացնելու: Միջազգային յարաբերություններում այդ մարմինը Արդարության Միջազգային Դատարանն է (International Court of Justice), որն ըստ տուեալ կառոյցի Կանոնադրության (Statute) 36-րդ յօդուածի 2(b) կէտի իրաւասու է քննության առնելու եւ որոշումներ կայացնելու *«միջազգային իրաւունքի ցանկացած հարցի» վերաբերեալ (any question of international law).*

Այսօր ակնյայտ է դարձել, որ Ղարաբաղեան հակամարտությանը վերաբերող *«ժողովուրդների ինքնորոշման»* սկզբունքը, դրա դրսեւորման ձեւերն ու խորությունը, այսպէս կոչուած *«տարածքային ամբողջականության պահպանման»* դրոյթը, այս երկուսի միջեւ իբր գոյություն ունեցող հակասությունը դադարել են զուտ իրաւագիտական հարցեր լինելուց: Սրանք հարցեր են, որ հազարաւոր մարդկանց կեանքին ու մահուանն են առնչւում:

---

[3] Leland M. Goodrich, Edward Hambro, Charter of The United Nations, Commentary and Documents, [second and revised edition], Boston, 1949, p. 103.

[4] Աւելի հանգամանալից կարելի է կարդալ. Արա Պապեան, Ինքնորոշում եւ այսպէս կոչուած «տարածքային ամբողջականություն» սկզբունքները միջազգային հանրային իրաւունքում, (Լեռնային Ղարաբաղի օրինակով), 21-րդ դար, #2, 2010, Նորավանք հիմանդրամ; Ara Papian, On the Principles of Self-Determination and so-called "Territorial Integrity" in Public International Law, (The Case of Nagorno-Kharabagh), Noravank Foundation, "21st Century", # 2, 2010
http://www.noravank.am/arm/jurnals/details.php?ELEMENT_ID=5189

Առանց նոյնականացնելու ըմբռնումները «ժողովուրդների ինքնորոշում» սկզբունքի նկատմամբ, հնարաւոր չէ այն կենսագործել: Առանց յստակեցնելու, թէ ի՞նչ է նշանակում «տարածքային ամբողջականութիւն» եւ ինչքանո՞վ եւ ինչի՞ց է այն պահպանւում, հնարաւոր չէ Ղարաբաղեան հակամարտութեանը լուծում տալ:

Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետութիւնը եւ Ադրբեջանի Հանրապետութիւնը, որպէս ՄԱԿ-ի անդամ երկրներ, պիտի միասնաբար դիմեն ՄԱԿ-ի դատարանին, որ է Արդարության միջազգային դատարանը, մօտաւորապէս հետեւեալ հարցերով.

1. Արդեո՞ք միջազգային իրաւունքում կայ «ժողովուրդների ինքնորոշման սկզբունք»: Եթէ այո, ապա՝ արդե՞օք «ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը» տարածւում է արդէն պետականութիւն ունեցող ազգի տուեալ պետականութիւնից դուրս գտնուող հաւաքականութիւնների վրայ: Եթէ այո, ապա՝ արդե՞օք որեւէ սահմանափակում կայ այդ ինքնորոշման վրայ:

2. Արդեո՞ք միջազգային իրաւունքում կայ *«տարածքային ամբողջականութեան պահպանման»* սկզբունք: Եթէ այո, ապա արդե՞օք այդ սկզբունքը սահմանափակում է *«ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը»*՝ զրկելով ինքնորոշուող հավաքականութեանը քաղաքական ինքորոշման իրաւունքից:

Ե՛ւ հայկական կողմերը եւ ադրբեջանական կողմը բազմիցս են խրոխտ ձայնով արտայայտուել իրենց դիրքորոշման միջազգային իրաւունքի վրայ խարսխուած լինելու մասին: Սակայն իրենք չէ, որ պէտք է որոշեն դա: Մինչեւիսկ միջնորդները լիազօրուած չեն դրա վերաբերեալ որոշումներ կայացնելու: Միջազգային յարաբերութիւններում դրա համար կայ համապատասխան մարմին:

Կարծում եմ հասել է պահը, որ միջնորդները դիմեն կողմերին՝ Արդարութեան Միջազգային Դատարանին հայցէագրուած համապատասխան հայցադիմումի նախագիծը ներկայացնելու խնդրանքով: Ապա դրանք պէտք է միասնականացնել եւ համապատասխան ընթացակարգով դիմել վերոնշեալ դատարանին: Եթէ կողմերից մէկը մերժի, ապա դա կը նշանակի, որ նրա բոլոր խօսքերը, թէ իր դիրքերը միջազգային իրաւունքի վրայ են խարսխուած, լոկ դատարկ խօսակցութիւններ են: Ըստ այդմ, միջազգային համայնքը պէտք է անի համապատասխան հետեւութիւն: Այդ դէպքում միջնորդ երկրներն իրենք, Արդարության Միջազգային Դատարանի Կանոնադրութեան 65-րդ յօդուածի հիման վրայ եւ Անվտանգութեան Խորհրդի անունից, վերոշարադրեալ հարցերի յստակեցման հայցադիմումով եւ խորհրդատուական կարծիքի (advisory opinion) ակնկալիքով պէտք է դիմեն ՄԱԿ-ի դատարանին:

Ինչքան էլ դժուար լինի Ղարաբաղեան հակամարտութեան լուծման վերաբերեալ որոշման կայացումը, անտարակոյս կրկնակի դժուար է լինելու դրա կենսագործումը: Հետեւաբար, Արդարութեան Միջազգային Դատարանի կողմից հակամարտութեանն առնչւող էական հարցերի յստակեցումը եւ դրանց վերաբերեալ որոշումը, օրինական (legal) եւ նպաստաւոր հիմք կը ստեղծի հակամարտութեան լուծման համար, քանի որ ի չիք կը դարձնի ներկայումս որոշ հիմնարար իրաւական հարցերի շուրջ առկայ կողմերի սկզբունքային տարաձայնութիւնները:

Երեւան, Հայաստանի Հանրապետութիւն